ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի N 755-Ա

ԲԱԺԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գայանե Բաղդասարյանի (ծնված 01.07.1980թ.) դիմումը (16/10/2026), անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 02102025-06-0096 վկայականը, «Սամվել Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված բաժանման հատակագիծը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ, 50-րդ, 51-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0212-0003 կադաստրային ծածկագրով բաժանված անշարժ գույքերին տրամադրել՝ 0,10303 հա մակերեսով անշարժ գույքին ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Խ. Աբովյան փողոց, 18/2 հողամաս հասցեն (փոստային դասիչ՝ 2102), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի ծածկագիր՝ 06011XXA6ACR և 0,0925 հա մակերեսով անշարժ գույքին ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Ս. Շահումյան փողոց, 68 բնակելի տուն հասցեն (փոստային դասիչ՝ 2102), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի ծածկագիր՝ 06011V5KJAPS:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի N 756-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՆԻԿՈԼԱՅ ԱՐԱՐԱՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով, 43-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 28.09.2023թ. N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով 2026 թվականի հոկտեմբերի 27-ին www.e-auctions.am էլեկտրոնային աճուրդների կայքի միջոցով անցկացված էլեկտրոնային աճուրդի արդյունքները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնք, գ. Նորաշեն հասցեում գտնվող 0.36հա (կադաստրային ծածկագիր՝ 06-082-0131-0039) գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք հողատեսքը 2260000 (երկու միլիոն երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամով օտարել 2026 թվականի հոկտեմբերի 27-ին էլեկտրոնային անցկացված աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված Նիկոլայ Արարատի Բաղդասարյանին:

2.Նիկոլայ Արարատի Բաղդասարյանը պարտավոր է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել լոտի գինը՝ հաշվանցելով նախկինում վճարված նախավճարը:

3. Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո Նիկոլայ Արարատի Բաղդասարյանի հետ երկու օրվա ընթացքում կնքել օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 757-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ

Հիմք ընդունելով քաղաքացի Արևիկ Մկրտչյանի (ծնված՝ 18/03/1975թ.) կողմից դիմումը (23/10/2026), անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման թիվ 04022015-06-0015 և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, համայնք Տաշիր, քաղաք Տաշիր Ալաշկերտ բ/զ 9-րդ թաղամաս 1-ին փողոց, 12 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, քաղաք Տաշիր, Ալաշկերտ զանգվածի 2-րդ փողոց, 10 բնակելի տուն հասցեն (փոստային դասիչ 2102), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր (06011FFRC23U):

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 28

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 758-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ

Հիմք ընդունելով քաղաքացի Վալենտինա Ծատուրովայի (ծնված՝ 27/03/1964թ.) կողմից դիմումը (26/10/2026), անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման թիվ 2406554 և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Մեդովկա, 2-րդ փողոց, 13 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Կրուգլայա շիշկա, 2-րդ փողոց, 13 բնակելի տուն հասցեն, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր (06072HXYSQ5A):

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 28

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 759-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ

Հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Ղուկասյանի (ծնված՝ 17/12/1979թ.) կողմից դիմումը (26/10/2026), անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման թիվ 1687952 և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Ապավեն, 1-ին փողոց, 14 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Ապավեն, 1-ին փողոց, 14 բնակելի տուն հասցեն, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր (06182FXAATAP):

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 28

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 760-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ի տնօրեն Սանասար Բեգլարյանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում իրականացրել է շինարարական աշխատանքներ՝ տեղադրելով է գազի կուտակման տարա:

2.Վարչական ակնտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ի տնօրեն Սանասար Բեգլարյանը, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր քաղաքի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 06-008-0009-0019 ծածկագրով հողամասում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, տեղադրել է գազի կուտակման տարա (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհինսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով :

Նշված փաստի պատճառով ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարչական իրավախատում կատարելու հիմքով կազմած N 1/5 արձանագրության հիման վրա 2026 թվականի հոկտեմբերի 16-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, հարուցվել է վարչական վարույթ:

Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակում 2026 թվականի հոկտեմբերի 28-ին հրավիրվել է վարչական վարույթի նիստ, որի մասին ծանուցումը իրավախախտ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի տնօրեն Սանասար Բեգլարյանին ուղարկվել է փոստային կապի ծառայության միջոցով /հիմք՝ 19.10.2026-ի

փոստային անդորրագիր/:

Վարչական գործի քննության (լսումների) տեղի և ժամանակի մասին ծանուցումը «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի տնօրեն Սանասար Բեգլարյանը ստացել է 22.10.2026-ին (հիմք՝ ստացման/հանձման ծանուցագիր):«ՖԼԵԾ» ՍՊԸ-ի տնօրեն Սանասար Բեգլարյանը վարչական վարույթի շրջանակում գումարված նիստին չի մասնակցել:

3.Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին » օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 154-րդ հոդվածի 1-ին մասի՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհինսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

Հաշվի առնելով վերը նշված փաստական և իրավական հիմնավորումները,հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի տնօրեն Սանասար Բեգլարյան կողմից վարչական իրավախատում կատարելու հիմքով 16 . 10 . 2026-ին կազմված N 1/5 արձանագրությունը և վարչատուգանային հանձնաժողովի նիստի արձանագրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումնրի վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ պարբերությունների, 37-րդ,

281-րդ, 282-րդ և 283-րդ հոդվածների պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով, 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետերով՝

1. «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի տնօրեն Սանասար Բեգլարյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ Հյասատանի Հանրապետության վարչական իրավախատումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված արարքը կատարելու համար և նշանակել տուգանք 750.000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Նախազգուշացնել «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի տնօրեն Սանասար Բեգլարյանին,որ եթե,սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո,չվերացնի ինքնակամ իրականացրած շինարարության հետևանքները և հողատարածքի նախկին տեսքը չվերականգնի, ապա, համաձայն Վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի, կնշանակվի տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով ,և Տաշիրի համայնքապետարանը ստիպված կլինի կիրառել նշված պահանջի ապահովման համար օրենքով սահմանված անհրաժեշտ միջոցներ:

3. Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինասների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081298 հաշվարկային հաշվին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելու օրվան հաջորդ օրվանից:

5. Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կարող է երկամսյա ժամկետում վարչական կարգով բողոքարկվել դատական կարգով՝ Հայստանի Հանրապետության վարչական դատարան:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման:

ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 28

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 761-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N704-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 15-ի «Փոխադրամիջոցների գույքահարկի գերավճարի հաշվանցում և վերադարձ կատարելու մասին» N704-Ա որոշման 2-րդ կետում «118207 (հարյուր տասնութ հազար երկու հարյուր յոթ)» բառերը փոխարինել «118124 (հարյուր տասնութ հազար հարյուր քսանչորս)» բառերով :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 28

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 762-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՔՆԱՐԻԿ ՄԵԼԻՔՍԵՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով, 43-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 28.09.2023թ. N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով 2026 թվականի հոկտեմբերի 27-ին www.e-auctions.am էլեկտրոնային աճուրդների կայքի միջոցով անցկացված էլեկտրոնային աճուրդի արդյունքները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Անի զանգված, թիվ 12/2 հասցեում գտնվող 0,00455 հա (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0003-0028) բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը 527000 (հինգ հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամով օտարել 2026 թվականի հոկտեմբերի 27-ին էլեկտրոնային անցկացված աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված Քնարիկ Մելիքսետի Առաքելյանին:

2.Քնարիկ Մելիքսետի Առաքելյանը պարտավոր է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել լոտի գինը՝ հաշվանցելով նախկինում վճարված նախավճարը:

3. Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո Քնարիկ Մելիքսետի Առաքելյանի հետ երկու օրվա ընթացքում կնքել օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 28
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 763-Ա

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 15-ի N893-Ն որոշման 38-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Տաշիրի բաժնի գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Տաշիր համայնքի բնակիչ, անչափահաս երեխա Կարեն Հայկի Մարգարյանի հետ պրոֆիլակտիկ աշխատանքներ իրականացնելու համար նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կողմից համապատասխան աշխատակից՝ Տաշիրի համայնքապետարանի սոցիալական աջակցության և առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Լիլիթ Վաղինակի Ավետիկյանին :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 28

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 764-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ

Հիմք ընդունելով քաղաքացի Նինա Սուքիասյանի (ծնված՝ 08/01/1971թ.) կողմից դիմումը (26/10/2026), անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման թիվ 579784 և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Նորաշեն, Կ. Դեմիրճյան փողոց, 4 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Նորաշեն, Կ. Դեմիրճյան փողոց, 4 բնակելի տուն հասցեն (փոստային դասիչ 1513), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր (06242LM7RF8Z):

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 29
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2026 թվականի N 765-Ա

ԲԱԺԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովհաննես Փեթակչյանի (ծնված 09.11.1978թ.) դիմումը՝ 22072026-06-0049 վկայականը, «Միեր Գևորգյան» ԱՁ-ի կողմից կազմված բաժանման հատակագիծը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ, 50-րդ, 51-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0201-0001 կադաստրային ծածկագրով բաժանված անշարժ գույքերին տրամադրել՝ 0,74059 հա մակերեսով անշարժ գույքին ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Գ. Ջահուկյան փողոց, 1-ին նրբանցք, 2 շինություն հասցեն (փոստային դասիչ՝ 2101), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի ծածկագիր՝ 06011KVYM4W3 և 0,39280 հա մակերեսով անշարժ գույքին ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Գ. Ջահուկյան փողոց, 1-ին նրբանցք, 2/2 շինություն հասցեն (փոստային դասիչ՝ 2101), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի ծածկագիր՝ 06011EQRAYHG:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 30
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2026 թվականի N 766-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Պետիկ Ավդալյանի (ծնված 31.06.1962թ.) դիմումը (27.10.2026) և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, Սարչապետ գյուղում գտնվող, 06-100-0024-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Սարչապետ, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, 1 բնակելի տուն հասցեն (փոստային դասիչ՝ 2117), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06172PZQSWQE:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 30

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2026 թվականի N 767-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Անդրանիկ Դիլբարյանի լիազորված անձ Արթուր Սարգսյանի (ծնված 18.12.1974թ.) դիմումը (13.10.2026) և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, Սարչապետ գյուղում գտնվող, 06-074-0042-0015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Մեծավան, Գայի փողոց, 13 խանութ հասցեն (փոստային դասիչ՝ 2112), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06132M2XABLX:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 30

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2026 թվականի N 768-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ

Հիմք ընդունելով քաղաքացի Սայաթ Անտոնյանի (ծնված՝ 21/12/1965թ.) կողմից դիմումը (26/10/2026), անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման թիվ 903042 և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Սարատովկա, 1-ին փողոց, 74 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Սարատովկա, 1-ին փողոց, 74 բնակելի տուն հասցեն, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր (06112MUYHXEH):

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 30

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2026 թվականի N 769-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ

Հիմք ընդունելով քաղաքացի Ռոբերտ Սոլոյանի (ծնված՝ 13/07/1956թ.) կողմից դիմումը (28/10/2026), անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման թիվ 903042 և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Մեծավան հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր, գյուղ Մեծավան, Ա. Խամփերյանց փողոց, 11 հողամաս հասցեն, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր (06132A6RN2FL):

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 30

ք.Տաշիր